ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 1 օգոստոսի (ՏԱՍՍ)։ Իրադրությունը ինքնավար մարզում և մերձակա շրջաններում շարունակվում է մնալ լարված։ Ձևայած հատուկ կառավարման կոմիտեի, հատուկ շրջանի պարետության և իրավապահ մարմինների ձեռնարկած միջոցներին, դարձյալ տեղ են գտնում ճանապարհների շրջափակման, ավտոմեքենաների վրա հարձակումների դեպքեր՝ ինչպես բուն մարզի տարածքում, այնպես էլ նրա սահմանամերձ շրջաններում։ Հուլիսի 31-ին Ադրբեջանական ԽՍՀ Լաչին քաղաքի շրջանում մի խումբ անձինք՝ մոտ երեք հարյուր մարդ, հարձակում են գործել շինանյութերով բեռնված ավտոշարասյան վրա, որը Հայկական ԽՍՀ-ից մեկնում էր ԼՂԻՄ։ Դրա հետևանքով տուժել է տասներեք վարորդ, նրանցից երեքը հիվանդանոց է տեղափոխվել։ Հարձակումը հետ մղելիս տուժել է նաև շարասյունն ուղեկցող երեք զինծառայող։

Տարբեր աստիճանի ծանրության վերքեր է ստացել նաև հարձակում գործածներից յոթը։

Ի պատասխան այդ գործողության, Ստեփանակերտում փորձեր են արվել փակելու Ծուշի—Աղդամ ճանապարհը, որոնք ժամանակին կանխվել են դեպքի վայր հասած միլիցիայի ու ներքին զորքերի կարգախմբերի կողմից։

Ստեղծված իրադրության ուսումնասիրման և անհրաժեշտ միջոցների ձեռնարկման համար օգոստոսի 1-ին Ստեփանակերտ և Լաչինի շրջան է մեկնել ԽՍՀՄ ՆԳՄ ներքին զորքերի պետ, գեներալ-գնդապետ Ցու. Վ. Ծատալինը։